

նին: Արքան վիճարանութեան մէջ մանկա նոցա հետ այնքան աւելի ճշմարտութիւնը պիտի ստեղծուի որովհետեւ նոցա չունին դադարեալ նոր դրամարտութիւններ և բարձր-բանքներ ստեղծելու և բարդելու մէկի միւսի վրայ: այդ նոցա զը-խաւոր զէնքն է: որոյ գործադրու-թեան համար զինուորներէլ շատ ունին: խարդախութեան աշխար-հումս:

Վա՛յ այն ժողովրդին, որոյ մէջ մի նաւթափառում մի լապտերափա-ռում, մի խանութպահ ի շնորհս վե-րոյնիս լուսաւորեալ իրանց հա-մարդոյ շահամէլ և ինքնասէր հո-գաբարձուաց պէտք է քննադատեն և դատաւիտեն համարաւորական ուսումնականի գիտութիւն, համոզ-մունք, հայեցողածքները, վարքն ու բարքը, եւր իրանք ամեն տեսակ ակտի մէջ թափափափած են. միշտ մոռանում են այն խօսքը թէ՛ «Եկե-ծաւոր, հան նախ զգերան յակա-նէ քումմէն»: Այսպիսի անապաւ-րութիւնը սովորական է դժբաղդա-բար մեր մէջ ամեն ուրեք, որ և զխաւոր պատճառն է մեր դպրոցնե-րի մեծամասնութեան անմիջապա-ր զինակն: Յայտնի բան է մանրափա-ռաններն այնքան յանգանք չունին իրերի այս անշահական վիճակի վե-րաբերութեամբ մեր մէջ, որքան այն իրանց ուսումնական համարող-ներն, որոնք առիթ են տալիս նրանց իրանց չափը մոռանալու, ընկերա-

նալով նոցա հետ և անձամբ ան-չափաւորութեան օրինակ ցոյց տա-լով:

Մեծ յանցանքը վերջիններինն է:

«Մեղուի» № 66-ումը մի թըղ-թակցութիւն կար տպուած, որոյ մէջ պ. յօդուածագիրը մի քանի աննպատ տնտեսութիւնք էր ա-նում դէպի արժ. Ստեփաննոս ա-ւագ քահանայ Տէր-Ստեփաննանցը, իրրեւ Գորոսայ ուսուցչական Սեմի-նարիայի հայ կրօնի և լեզուի ու-սուցչին:

Գիշեալ թղթակցութեան առթիւ տէր-հայրը խմբագրատուն եկաւ և մի առ մի ցոյց տուեց մեզ 1) իւր աւօրեայ պարապմունք մի քանի տա-րուայ մատենան, որոյ մէջ մանրա-մատնաբար գրած է թէ իւրաքանչեւ չիւր դատում իւրաքանչեւր առաք-կայից ի՞նչ և ո՞րքան է անցկացած. 2) ցուցակ այն գրքերի որոնք Սե-մինարիայում ընդունուած են թէ՛ իրրեւ դասագիրք և թէ՛ իրրեւ ըն-թերցանելիք: 3) Աշակերտաց շա-րագրութեանց տետրաւները և վեր-ծառնած այս ու այն աշխարհաբա-ղքերի սեղմած բովանդակութիւն-քը: 4) Հայ կրօնի և լեզուի դասնե-րի որքանութեան աղեւսակը: 5) Մի քանի պաշտօնական թղթեր, որոն-ցից մենք ուրախութեամբ սրտի տե-սանք, որ եթէ Գորոսայ դպրանո-ցում այսօր տեղական լեզուներ էլ

դասախօսուում են, զրան մենք պար-տական ենք տէր-հոր այն խելացի դատողութեանը, որ նա ներկայաց-րել և պաշտպանել է ուսումնական վարչութեան առջ: Եւ ուրիշ մի քանի թղթեր, որոց առաջ բերելը աւելորդ ենք համարում:

Խմբագրութիւնս տէր-հոր ներկա-յացած մատենաներն, թղթերն, ա-շակերտաց շարագրութիւնքն աչքից անցկացնելով այն եղբակացութեան եկաւ, որ Տէր-Ստեփան հայրը Գո-րուայ Սեմինարիայում աւելի շատ բան է արել հայ կրօնի և լեզուի համար, քան մեր շատ միջնակարգ դպրոցների ուսուցիչներն: Շատ եր-կար իր լինելը, եթէ մենք մի առ մի դուրս բերենք այն փաստերն, որոց-մով ոչ միայն արդարացնում, այլ բացարձակաբար զովում ենք տէր-Ստեփան հոր գործունէութիւնը և աշակերտների ջանասիրութիւնը, որե-րեւում է նոցա շարագրութիւններին: Այդ հիման վրայ մենք կարծում ենք, որ մեր թղթակցի աննպատ տնտեսական պէտք է որ հետեւանք լինին կամ վաղվադիտութեան կամ միակողմանիութեան:

Վերջապէս տէր-հայրը մեզ պատ-մեց, և մենք մի քանիսից ստուգե-ցինք, որ Սեմինարիայի հարցաքն-նութեանց ժամանակ միշտ ներկայ են եղել և շատ զոհ մնացել տե-ղական հոգեւոր իշխանութեան ներ-կայացուցիչներն և հայ դպրոցի ու-սուցիչներն:

Որովհետեւ յարգելով լրագրու-խօսքը տէր-Ստեփան հայրը զիջաւ մեզ ցոյց տալու վերոյիշեալ-ներն որովհետեւ մենք աւե-լորդ համարեցինք նրան գործունէ-ութիւնը արդարացնող փաստերից շատերը հրապարակ հանել, ուստի յանուն արդարութեան հրաւիրում ենք մեր թղթակցին անձամբ անձին գնալ Գորի, տեսնել մեր տեսածնե-րը, տեղն ու տեղը ստուգել և տե-ղեկանալ ամեն ինչ:

Այս ատճարիութիւնը մենք ա-նում ենք տէր-հոր կողմից և նրա թախանձանօք: Եթէ մեր թղթակի-ցը յիշաւ, որ գործը և արդարու-թիւն սիրելու և պաշտպանելու հա-մար էր գրած իւր սողներն — ինչպէս մենք կարծում ենք — յայն դէպս թող յուսանք, որ նա չի զբաւա-լ տէր-հոր ինչիւր կատարել: Ապա թէ ոչ ինքներդ համաձայնեցէք, որ լաւ բան չէ յանկարծ վերկենալ և առանց հիմունքների դատապարտել մի մարդուն, որ երկար տարիներ ընթացքում հայ հասարակութեա-նը յայտնի է եղել իրրեւ խոհմ գործունէայ և օգտակար գործիչ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Պ Օ Լ Ի Ս

16/28 օգոստոս

(Թղթակցութիւն «Մեղու» Հայաստանի լրագրի)

Պօլսոյ և կարելի է ըսել ընդհանուր ճանկաստանի վիճակին մէջ քան զամե-նայն դժուարին բան տղու մը չափահաս եղած օրն է իւր ծնողաց համար: Ի բաց առեալ սակաւաթիւ անձանց ոմանց դաս մը, միւս ընդհանուրին համար հայր և մայր խորհուրդ կ'ընեն թէ ինչ գործի, ինչ արհեստի կրնան դնել իրենց զաւ-կը: Արհեստը երբեմն գրեթէ բոլորովին հայոց ձեռքն էին ոչ միայն Պօլսոյ՝ այլ շատ ուրիշ քաղաքաց մէջ իսկ հիմա օր աւուր անկման վիճակի մէջ են, որով-հետեւ եւրօպացւոյ արհեստից կատարե-լութեան և ամուսնի հետ մրցել շատ դժուարին է: Թէպէտ դեռ կը գտնուին մարդիկ, որ ձեռքի դարմանալի յաջ-գութեամբ տակաւին կը կռուին, բայց մինչև երբ:

Վաճառականութիւնը օր աւուր անկ-ման վրայ է նորայէս, մանկութեանց թիւը եթէ նուազել է, բայց գործեր-նին պղտկեցնող վաճառականաց և սե-ղանաւորաց թիւը կ'աւելանայ, լաւ գոր-ծակատարք, հաշուակալք անգործ կը մը-տածեն: Կրպակաւորք, որ իրենց գործը կարգի դրած կ'ապրէին երբեմն չափա-ւոր հանգստութեամբ, տեսնելով որ ի-րենց թիւը մէկ կողմէն կը շատնայ, մինչ միւս կողմէն յաճախորդաց թիւը կը պակսի, ապաղաչէն կը յուսահատին: Մեծամեծ գործաւորութեանց համար երկ-րին մէջ ոչ դրամ կայ և ոչ վստահու-թիւն, իսկ օտարը, որ դրամապիսի տէր է, տեսնելով որ օտմանան կառավա-րութիւնը խեղճ կը նայի իւր ձեռնար-

Անման լուսնիմբ լալիս էր և ոչինչ չէր պատասխանում:

— Ինչու ես լալիս, հարցրեց մայրը, միթէ չես սիրում Սարգիս աղի տղին:

— Չէ, մայրիկ ջան, չէ, ես Աղէք-սանդրին չեմ սիրում:

Ծնողները զարմացան իւրեանց աղջ-կանից այդպիսի յանդուգն խօսքեր լսե-լով, նոքա բոլորովին չէին սպասում այդ:

Ուրեմն ո՞ւր է ես սիրում և ո՞ւմ վե-րայ ես ուղում ամուսնանալ, հարցրին ծնողները չիտնուած:

Աննայի սիրտը արագ բարակում էր, նա չէր վստահանում իւր սիրածի անու-նը տալ:

— Ասա, ինչու ես լալիս, հարցրեց նորից մայրը:

— Ես սիրում եմ Անտօնին, վերջա-պէս ասաց ցած ձայնով Աննան:

— Ի՞նչ Անտօն, ինչ ես ասում:

— Կարապետի տղայ Անտօնին, ասաց վճռաբար Աննան:

Ինչիւր ես մտածում, գիտե՛լ ես ինչ է, ասաց բարկացած մայրը, Անտօ-նը ո՞վ է որ նոյա վերայ աչք ունես և վերջապէս նա տանը հաց չունի ուտե-լու քեզ որտեղից կարող է պահել:

— Բայց ես սիրում եմ Անտօնին, նա շատ լաւ տղայ է, պատասխանեց Աննան կարմրելով:

— Դէ, բաւական է, անպիտան աղ-ջիկ, լեզուդ քեզ քաշիւր, բարկութեամբ գոչեց Պօլսոյ աղան, դու մի այնպէսի բան ես ուղում անել, որ թէ քո անու-նը և թէ քո ծնողների անունը ուղում ես ցելիս հետ հաւասարացելու ֆեղ եմ ասում, ինչ կասեն հարկաներդ, բարե-կամներդ, երբ որ իմանան, որ Պօլսոյ աղի քնքաւար պահած աղջիկը պա-կուել է որմնադիր կարապետի տղի վե-րայ: Ամբթ է քեզ, որ այդպիսի բաներ ես մտածում:

— Վերջապէս Անտօնը որտեղ Աղէք-սանդրը որտեղ, Անտօնի նման հարկաւ-ւոր ծառաներ ունի Աղէքսանդրը, աւե-լացրեց Աննայի մայրը:

— Կեռ փոքր ես, խնդրէ ոչինչ չէ հասնում, ասում էր աւելի մեղմօրէն Պօլսոյ աղան, դու, որ միշտ սովոր ես այդինքնում ճեմել, կառքեւով ման գալ, լաւ դարդարուել, հագնուել, ուտել, խմել, այդ բաները էլ չես տեսնի եթէ ուղէք ձգես Անտօնի նման աղքատ տը-ղերանց վերայ, իսկ եթէ դու պակասե-ս Աղէքսանդրի նման հարուստ տղի վե-րայ, նա քեզ թաղանձ նման կը պահի: Անտօնի նման հարկաւոր ծառաներ քո հրամանին կ'ապաստեն: Ամեն օր կառքե-րով ման կը գաւ, կուռ կուռի ձգած դու և Աղէքսանդրը կը ճեմէք Աղէք-սանդրեան այգիում և տեսնող իսկոյն երանի կը տալ քեզ, ուր այդպիսի հա-րուստ տղի վերայ ամուսնացար:

Աննան չարժանալ լալիս էր: Նա չէր էլ լսում իւր ծնողների քարոզները, այլ նորա ուղը ու միտքը գրաւել էր Անտօ-նի պատկերը որը նորա երեակայու-թեան մէջ կանգնած, աչքերը խղճալի կերպիւ դարձրել էր զէպի Աննան և կարծես ասում էր. «Աննա, Աննա, ո՞վ դաւաճանի ինձ, դու մի դաւաճանի»:

— Չէ, հայրիկ, ես չեմ կարող թող-նել Անտօնին, ես սիրում եմ նրան և նա էլ ինձ է սիրում: Մենք երջանիկ կ'ապրինք եթէ...:

— Աղջիկ, ինչ ես գիտե՛լ, ընդհատեց մայրը:

— Հա, հայրիկ ջան, մայրիկ ջան, ինձ սպանեցէք ու Անտօնից միջ բաժնի: Աղէքսանդրը հարեցող է ես նրան բը-նաւ չեմ սիրում:

Ծնողները ապեցան:

— Ո՞վ է ասում թէ հարեցող է, ինչ ես ասում: Նա գինի էլ չէ խմում, ասաց Պօլսոյ խեղդուած ձայնով:

— Ա՛խ, Աստուած, ինչու ինձ այս-պէս ստեղծեցիր, չարունակ լալիս էր Աննան:

Մայրը բարկութեամբ կրծտայնում էր ատամները, իսկ հայրը կատաղած չըր-ջում էր սենեակի մէկ ձայրից միւսը:

— Աղջիկ, շատ ես սիրում Անտօնին, հարցրեց մայրը:

— Հա, մայրիկ, սիրում եմ, պատաս-խանեց Աննան:

— Շատ լաւ, ինչո՞վ պէտք է նա քեզ պահի, դու կարող ես քաղցած, աղքատ և պատառոտած չորերի մէջ տալիս, ե-թէ հա, ամուսնացիր Անտօնի վերայ, այն ժամանակ, մենք այլ ես ծնողները չենք, դու մեռած կը լինես մեզ համար և մենք քեզ համար: Ասա, որն ես ու-ղում, հարուստ ապրել, քո ընկերուհի-ներդ նախանձը դողուել դէպի քեզ, թէ աղքատ ապրել և ընկերուհիներիդ վրայ ծիծաղեցնել: Ասա, միայն երկու խօսք պակսում ես Աղէքսանդրի հետ թէ ոչ:

Աննան տատանվում էր և չը գիտէր ինչ պատասխանէր: Նա սիրում էր Ան-տօնին, բայց մի և նոյն ժամանակ սի-րում էր և լաւ ապրել, չքեղ զարդա-րուել և կուռ կուռի տուած իւր ամու-սնոյ հետ, ճեմել Աղէքսանդրեան այգի-ում: Աղէքսանդրը հարուստ մարդու ուր-գի էր, նա կարող էր իւրեան պահել, իսկ Անտօնը, որին խօսք էր տուել չը բաժանուել, աղքատ մարդու տղայ էր: Նա չէր կարող իրան պահել այնպէս որպէս ցանկանում էր: Եւ վերջապէս ծնողները ընդդէմ էին Անտօնի հետ պատկուել ի՞նչ անել, չը գիտէր երկու ծանր հարցեր ներկայացնում էր իւր ա-ռաջ, երկուսն էլ զօրք: Աղէքսանդրը որին չէր սիրում և որը հարստութիւն ունէր, ահա առաջինը, իսկ երկրորդը Անտօնն է իւր ազնիւ հոգով, որը չու-նէր հարստութիւն: Ի վերջոյ երկար

տատանուելով, նա գերադասեց հարս-տութիւնը, կառքերով ճեմելը, զար-կաւորելը Անտօնի ազնիւ հոգեւոյն յառ-կութիւններից և զիջանելով ծնողների խօսքերին նա ուսուցարոււ եղաւ: Այն, ես չեմ ուղում աղքատ ապրել, ես կա-մուսնանամ Աղէքսանդրի վերայ, ինչ-պէս դուք ցանկանում էք, ասաց Ան-նան նորա աչքերից դուրս բղիւնցան բազմաթիւ արտասուքի կաթիլներ և նա բարձրաձայն լաց լինելով ընկաւ մօր գրկով:

Ծնողները ուրախացան և գովեցին Աննայի ընտրութիւնը: Ամեն բան վըճ-ռուած էր և շուտով պիտի կատարուէր թէ նշանադրութիւնը և թէ պսակը:

Նոյն իսկ այդ երեկոյիս Աննան կանգնած էր իրանց տան դռանը և լուս հառաչում էր: Նա անհամբերութեամբ սպասում էր Անտօնին: Անտօնը շատ սպասել չը տուաւ, շուտով նա երեկեաւ փողոցի ծայրում, որը զալիս էր խա-նութիւն: Մօտենալով նա Պօլսոյ աղի տանը, նկատեց Աննային: Նրա սիրտը արագ բարակեց և բռնելով Աննայի ձեռքը, խօսք չը գտաւ ասելու:

— Անտօն ջան, ասաց Աննան ցած ձայնով:

— Ա՛խ, հրեշտակս, այդ դու ես, ին-չու դու լալիս ես, ու հառաչում, ինչու քո պայծառ աչքերը թրջվում են ար-տասուքներով, վաչ ինձ, ասա, Աննա՛ միթէ ծնողներդ քեզ ուրիշի վրայ են ամուսնաւորում, միթէ ինձանից բաժա-նում են քեզ: Աստուած իմ, չէ, ես չեմ թող տալ, մենք կը փախչենք մի-ապիսի Ասա՛, խօսիւր, հրեշտակս, քո այդ արցունքներդ, որ լուսնեամբ թրջում են քո դնեցիկ աչքերդ ինձ մահ են պատճառում...:

— Այո, Անտօն ջան, ինձ խլում են քեզանից, բարեկենդաններն իմ ծնող-ները ինձ պսակում են ուրիշի վերայ,

եւ ոչինչ չեմ կարողանում անել, ես պիտի հնազանդիմ ծնողներիս կամքին: Իմ ծնողները քեզ ասում են, նոքա ասում են Անտօնը աղքատ տղայ է, փող, հարստութիւն ունի... հարստու-ցիւր Անտօն ջան և միւր չենք բաժա-նուի... Կարծես մի գոյլ սառը ջուր թա-փեցին թշուառ Անտօնի վերայ: Նա չը-փոթուած գրկեց իւր նաղելիին՝ և խե-լագարի նման կանչեց:

— Քեզ իրում են ինձանից, ես հա-րուստ չեմ... երկինք, խորտակուի դը-լիս, բայց չէ, չէ, ես չուտով կը հա-րստանամ, ես կը ծախեմ իմ գրկիւր և չեմ թող տալ, որ միջ բաժանեն... Ան-նա, Աննա, միթէ ինձ չես սիրում, մի-թէ ինձանից պիտի բաժանուի:

Օրիորդը ոչինչ չէր պատասխանում, նոքա երկուսն էլ հեկեկում էին: Այդ ժամանակ փողոցի ծայրում երեկեաւ մի մարդ: Սրբու յուզեալ սրտերը բաժա-նուեցան իրարից:

Գ.

Գիշեր էր: Խաւարը պատել էր Տ. քաղաքին, ոչ-ինչ չէր երևում, ամեն բան թաղնուած էր խորին խաւարի տակ: Քաղաքին լապտերներն եւ այս գիշեր մառախուղի պատճառաւ արձակում էին շատ տղօտ լայս: Այդ միջոցին Հ. թաղի անչուք տներից մէկի բուխարի մօտ նստած էր որմնադիր կարապետը և սուրացնում էր իւր սառած անգամները: Մի և նոյն սե-նակում թախտի վերայ նստած էր և Թագուհին: Ժամանակը բաւականին ուշ էր: Այդ ժամանակ այդ ընտանիքը սո-վորաբար քնած էր լինում, բայց այս գիշեր արթուն էին: Այս գիշեր ծնողնե-րը սպասում էին իւրեանց միակ որդի՝ Անտօնին, որը սովորականից մի վտար ուշացել էր: Թագուհին սրտատարով բա-պասում էր իւր արեւի որդուն, նա գի-տէր նորա բնակարանները, նա գիտէր,

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«Նովոե Օբզորենիե» լսել է, որ Շուշուց պատգամաւորներ են եկել Թիֆլիս խնդրելու համար, որ իշխանութիւնը 25-վանիւրի գաւառում 10,000 օրավար հող տալ 100 ընտանիքի այնտեղ գաղթելու համար: Գաղթելու ցանկութիւն յայտնողները ուշուժ են միմիայն երկրագործութեամբ և պարտիզպանութեամբ պարագել:

Թիֆլիսի աւազին գիմնազիճնի աշխատ աշակերտներին օգնելու համար կազմուած ընկերութիւնը, ամսոյս 1-ից ամօժանցին ձայնարան է բաց անում աշակերտներին համար:

Բագուումը մօտ ժամանակում կայսերական բանակի բաժին պէտք է բացուի: Բագուցի, փոխադարձ երաշխաւորութեամբ, 3000 ռ. նպաստ են խոստացել նոր հիմնարկութեան համար:

Սեպտեմբերի 8-ին Կիւմուլու տեղական մէտրապօլիտի նախագահութեամբ ժողով է կազմուելու, որին մասնակցում են 8 եպիսկոպոսներ: Ժողովին նպատակն է ռուս հոգևորականութեան վիճակը բարելաւելու համար գտնել:

Հաշտարար դատարաններում, քաղաքական գործերի համար, գործադրուելիք գործերի որոշակ տուրքերի և զբոտապատու թղթերի մաքսի օրէնքը, որ հաստատուած է մայիսի 10-ից 1877 ամի, մտադրութիւն կայ պարտադիր անել և՛ կովկասի համար:

Սովի տարինում ժողովրդին նպաստելու համար, մտադրութիւն կայ, կովկասում հացի ամբարներ և առանձին դրամագլուխ կազմել:

Ռուսաց «Արձագանգ» թերթը հաղորդում է, որ Պետերբուրգի վաճառականները և արհեստագործները ստորագրութիւն են ժողովում, որով ուղում են մայրաքաղաքի քաղաքատեղից խնդրել, որ սա Պետերբուրգից դուրս քէէ հրէաներին, որոնք ռուսաց ձեռքից խլած են վաճառականութիւնն ու արհեստները:

Չեք կարծում թէ այս անվտ առաջարկութիւնը յարգուի:

Վերջնականապէս դադարեցրած են համարվում հետեւեալ ռուս լրագիրները. 1) «Արձագանգ», 2) «Նրաժնչական Ալտայ», 3) «Չայն» (Ղոջոս), 4) «Արհեստ», 5) «Մոսկվայի լրագիր», 6) «Մոսկվայի լրագիր» և 7) մի քանի լրագիր:

Եւրոպայի դժուարութիւնից — գրում է «Դրոշմա»-ն — Սուիսումի մտնելով բրեյնկուլու ռուս գաղթականները կոտորուում են:

«Նովոստի»-ն յայտարարում է՝ թէ պետութեան հաշուով բացուած տպարաններն պէտք է փակուին և նրանց կատարելիք գործերն մասնաւոր տպարաններին պէտք է յանձնուին:

Ֆրանսիացի բժշկապետ Բիւրլը երեսուն տարուայ ընթացքում արած տեսական և գործնական հետազոտութիւններից այն եզրակացութեան եկաւ, որ պղնձը ամենալուս և ամենից հաստատուն դեղն է խօլերայի դէմ: Բիւրլը իւր բազմաթիւ և բազմադիմի փորձերի և պատմական փաստերի վրայ յեցած հաստատում է, որ այն տեղերում ու

գործարաններում, ուր պղնձի գործարաններ կան, ուր բանւորները այդ մետաղի զուրկին են ծծում, միանգամայն, և բաց է բաց ապահովացրած են խօլերայից:

Սոստոսի 20-ին Դէնէվայում հանդիսաւոր կերպով, և Եւրոպայի, գրեթէ, բոլոր տէրութեանց ներկայացուցիչների մասնակցութեամբ, բացուեցաւ «Կարմիր խաչի ընկերութեան» միջազգային կոնգրէսը:

Պետերբուրգի արհեստաւոր դասակարգը, մասնաւոր նուիրատուութիւններով մի գրամագլուխ էր կազմել, որպէս զի արհեստագիտական դպրոցների ընթացաւարտ աշակերտութիւններին մարդու գնալու նրանց օժիտը պատշաճուորի: Ներքին գործոց նախարարը, որից թուրքականութիւն էին խնդրել առ ալը, բացառեց արհեստաւորներին:

Ռուսիայի մի քանի նահանգներում, ս. Բիւրգի հրամանաւ, մի քանի կուսանոցներ են բացուելու, որոց մէջ ապաստարան և կրթութիւն են ստանալու հոգևոր դասակարգի որդիները:

Ձվեցարիոյ Բաղէլ քաղաքում ականջի ցաւեր բժշկող բժիշկներ միջազգային — այս վրայ երրորդ — ժողովը բացուեցաւ:

«Նովոստի» լրագիր 234 №-ում մի փոքրիկ յօդուած կայ Զէյթունի վերջին անցքերի մասին:

Շիրակի մէջ գրում են. — Շիրակում այս տարի չափ անաւառ է ցորենը, երկրագործները սկսել են կալել, և շատ անդեր արդէն նոր հացը պատրաստ է:

Նոյն տեղից հաղորդում են. — Տաճկաստանի մէջ մարդ Ալէքսանդրապօլի և Կարսի ճանապարհի մէջտեղում կորցնում է իւր կշիռը կախ արած պաշտօնակը, որի մէջ լինում են շատ պիտանի թղթեր և փողեր, 110 հատ օսմանան մէջիտիայ ունի և 24 հատ 25 ռուբլիանոց թղթադրամ, որոց գումարն լինում է 1580 ռուբլի փող. ունին միասին հաշուած, իւրաքանչիւրը 9 ռուբլով, խնդրելու առկայութիւնը փողերի մասին այնքան չէր ցաւում, որքան կորցրած թղթերի համար, որ ասում էր թէ շատ կարեւոր էին և իրա անելով այդ նամակները Թիֆլիսից և Էջմիածնից էր տանում նա Կ. Պօլիս, որ յատուկ զրկուած էր: Մինչև օրս դեռ ևս գտնուած չէ, որ լինում է մօտաւորապէս 15 օր նորա կորցրած օրից:

— Ղզախից գիւղում մի կին ծընու երեք արու գաւակ և երեքն էլ մեռած էին:

— Շիրակում հայոց ծխական դպրոցներին Բարձրագոյն իշխանութիւնից հաստատուած նոր կանոնադրութիւններ բաժանեցին, որ այն ծրագրով և կարգով աւանդուի ուսումնի դպրոցների մէջ, որպիսին որ կանոնադրութեան յօդուած. ներում ցոյց է տուած, և որոց մէջ անհրաժեշտ է և պարտադիր են արել պետական լեզուն աւելի տարածուելու և սովորեցնելու:

— Քիւրակղայայ հայոց գիւղում մի Ղազար անունով մարդ կէս սալ խոտի համար, որ իրա դրացի երկու եղբայրը քաղել էին, Ղազարը նրանց հրացանի է բռնում և երկուսին մի անգամից ըստ պանում և ինքը փախչում է, թէ և ոտիկանութիւնը աշխատում է նորան ձերբակալել, բայց այնու ամենայնիւ չի յաջողում նորան գտնել: Ինչպէս լուսեմը, նա անցել է տաճկաց սահմանը:

— Շիրակում կրկին շատաշան նոր

տեսակի աւազակներ, որ օրով ցերեկով լծաւում և սպանում են մարդկանց ամենաշին բանի համար:

— Շիրակում երեխայոց մի տեսակ հիւանդութիւն կայ, որ տեղական բարձրագոյն փորձարիներ են ասում և շատ խոշոր թւով զոհ է տանում:

— Մի համառօտ հայտ. Շիրակայ մշտական եղած տարեկան արդեանց 34 հայ գիւղերի, տարեկան լինում է 150 պսակ 3 ռուբլով, որ անում է 450 ռ., տարեկան մկրտութեան և պսակի լուսազին 160 ռ., տարեկան հոգեբաժնից 100 ռուբլի, 34 գիւղերից ամենաքիչը տարեկան իւրաքանչիւր մի գիւղը 1 տոմար ցորեն, 1 տոմար գարի և մէկ մէկ պուդ իւղ և պանիր, անում է գումարն 34 տոմար ցորեն, 34 տոմար գարի, 34 պուդ իւղ և 34 պուդ պանիր. 34 տոմար ցորենը 10 ռուբլով 340 ռուբլի, գարին 4-ով 136 ռ., իւղը 10-ով 340 ռ., պանիրը 2 ռուբլով 68 ռ., գումարն լինում է 1594 ռուբլի, կան գիւղեր, որք երեք տոմար ցորենից էլ աւելի կը տան և նոյնպէս ուրիշ արդեանքերը:

«Կրտսէի թէ վերջերս Հոգովայ Ս. Պապը հրամայած է որ այսուհետեւ ամեն հոռի մէտաւան իւր ազգային եկեղեցւոյ ծէսերն ու արարողութիւնները շարունակէ: Եթէ այդ հրամանը անկախորդ գործադրուէր, լատին տարրը շատ պիտի տկարանար Պաղեստինում մէջ, վասն զի թէ Նրուաղէմի և թէ Նիւֆայից մէջ գտնուող արաբացի լատինաց գրեթէ 3/4 մասը օրթոդոքսութիւնը ձգող յոյներէ կ'արդկանայ, որք մինչև ցարդ լատին կղերիկ իրաւասութիւն տակ կ'ընտելուին և նորա պաշտպանութիւնը կ'վայելեն: Լատին կղերն այդ մասին բանակցելով Հոռովի Բորեականայի հետ հրամանը փոփոխութիւն կ'ստանայ, այսինքն 30 տարիէ ի վեր հոռովական եկեղեցին ընդունողք և լատին եկեղեցւոյ հետեւողք միայն պարտին այսուհետեւ իրենց ազգային եկեղեցւոյ ծէսերը կատարել իրենց ազգային կաթողիկ կղերիկ միջոցաւ: Սոյ վերջին որոշման համաձայն երուսաղէմի լատին ժողովուրդն քսան ընտանիք սկսան յոյն կաթողիկ եկեղեցին երթալ և շոն փնտել իրենց հոգևոր պետքերը: Կը մնայ միայն գիւղերից մէջ եղող ժողովուրդան խնդրը, որոց համար բանակցութիւնը կը շարունակուին Հոռովի Բորեականայի հետ, վասն զի յոյն կաթողիկ կղերն չունի տակաւին այն գիւղերն ու գործութիւնը, որ կարենայ լատին կղերիկ նման հոգալ ժողովուրդան նիւթաւոր պիտոյից մեծ մասը և պաշտպանել զինքը ամեն պարագայի մէջ: Ս. Պապ այս մասին այսքանը բաւ կ' համարեմ, ուրիշ անգամի թողնելով աւելի մանրամասն բացատրութիւններ

(«Արեւել») :

ՊԱՏԱՍԽԱՆԻԻ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ. Կարս. — Պ. Մարտիրոս Պօղոսեանին: Զեր թարգմանութեանց աւազինը՝ յարմար է սպագրել մեր երեք մանկավարժական թերթերիցը մէկում, որին դուք ուղում էք, իսկ երկրորդը — «Առողջապահական թերթում»: Ռուսի խորհուրդ երբ ապիւս յիշեալ խաբարութեանց դիմել:

Իմբազիր Պ. ՍԻՄԵՆՍԿԱՆՑ. Հրատարակիչ Հ. ԵՆՖԻԱՃԵԱՆՑ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

«Վ արժարան» մանկավարժական ամսագրի խմբագրութիւնը պատիւ ունի յայտնել ընթերցող հասարակութեան, որ ամսագրի երկրորդ ՏԱՐԵՇԱՐԱՆԻ Ձ. № 7, 8, 9 և 10 լոյս կը տեսնեն օգոստոսի վերջին:

«Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան» վարչութիւնը յայտնում է ի դիմութիւն Թիֆլիսի հայ հասարակութեան, որ ս. Նշան եկեղեցւոյ օրիորդական ԳՊՐՈՑԻ աշակերտութեան ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ սկսվից օգոստոսի 20-ից ամենայն օր առաւօտեան 10 ժամից մինչև 12, իսկ ուսումը — սկսած մերի 1-ին:

ԲԺՇԿԱՊԵՏ

ԹԵՅԻԸ

Վերագործու և ԱԶՔԱՅԱՆՈՎ հիւանդներին ընդունում է ամենայն օր առաւօտեան 9-ից մինչև 10 ժ.: Հասցէն. Ստաւոսեանի փողոց № 17. 6—3

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՅ ՌԵՍԻՄԵՆԱՐԱՆԻ Հոգաբարձական-խնամակալական վարչութեան կարգադրութեամբ
ՆՈՐԵԿ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ
ընդունելը կ'սկսուին սեպտեմբերի 1-ից, որի համար պէտք է դիմել ուսումնարանի տեսուչ պ. Կարապետ Թէմուրազեանին: Ուսումնարանը գտնվում է իւր նախկին տեղը և կարճ ժամանակից յետոյ կը տեղափոխուի իւր սեպհական նորաշէն բնակարանն. Նախագահ՝ վարչութեան՝ Մ. ՍԱԼԱՄԵՒԵԱՆ.

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՌԵՍԻՄԵՆԱՐԱՆԻ ԶԵՂԱՆԻ ՀՈՐԱՐԳՈՒԹԵԱՆ ԹՈՅՏԱՐՈՒԹԵԱՄԻ
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՐԻՍԵՐ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ԵՐԿՈՒ ՍԵՌՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
Ե Ր Ր Ո Ր Գ Մ Ա Ր Ի

Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:

Կուրսերը երկու բաժանմունքից են կազմած. մեծ բաժանմունք՝ մէկ տարուայի և փոքր բաժանմունք՝ երկու տարուայի դասընթացով: Իզական սեռի անձինքներից առանձին բաժանմունք է կազմվում: Աշակերտների պատշաճ յառաջադիմութեան համար, նոյն թիւը իւրաքանչիւր բաժանմունքի մէջ տաճանապահ է:

Աւանդելի առարկայք սքրս են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւնը 2) Առեւտրական Թուաբանութիւնը և վարժութիւններ համընդ վերայ 3) Հաշուապահութիւնը (պարզ կրկնակի և բանկային) 4) Առեւտրական Թղթակցութիւնը 5) Առեւտրական Ժողովրդական համար հաշի կանոններ 6) Գեղարվեստութիւնը 7) Գեղարվեստութիւնը:

Տեսական բացատրութիւնների հետ, որտեղ միայն հնարաւոր է, կատարվում են գույքընթացաբար գործնական վարժութիւններ: Որպէս զի աշակերտները կարողանան ձեռք բերել հաշուապահութիւնից լուրջ և գործնական գիտութիւն, մեծ բաժանմունքի մէջ կազմած կը լինի օրինակի զրասնեակ:

Տարեկան վարձը (բացի Ֆրանսերէն լեզուի և գեղարվեստական դասերից) մեծ բաժանմունքի համար 125 ռուբլի է, իսկ փոքր բաժանմունքի համար 75 ռուբլի: Գիշերօթիկ աշակերտները ընդունվում են առանձին պայմաններով:

Մեծ բաժանմունք մանուկները պէտք է ներկայացնեն միջնակարգ ուսումնարանի 4 դասարանի վկայական. իսկ փոքր չին ներկայացնում այդպիսի վկայական, նորանք նախապէս քննութեան են լծարկվում: Բուսեղենից և թուաբանութիւնից փոքր բաժանմունքի համար պէտք է գիտենալ՝ գրել և կարդալ ռուսերէնից և թուաբանութեան չորս գործողութիւնները: Կասաւանդութիւնները կատարվում են երկուցեան ժամերին և ուսերէն լեզուով. իսկ նոյն առարկաները կ'աւանդուեն և հայերէն, եթէ առնուազն 6 ցանկացող յայտնուին:

Աւարտող աշակերտները հարցաքննութիւններից յետոյ ստանում են ատեստատներ իրանց ցոյց տուած յառաջադիմութեան համեմատ:

1884-85 տարուայ ուսման ընթացքը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, ամենայն օր, երկուցեան 5-ից մինչև 8 ժամ: Մանրամասն տեղեկութիւններ ու կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի ստանալ ձրի ապէս և եղարց Մովսէսովի բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Սովորակի և Թիֆլիսի փողոցների անկիւնում Ալէքսանդր Ղորգանեանի տանը) № 21: Ստաւաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին՝ Вѣ Тифлисѣ. Степану Мануэляну.

Կրտսէի թէ վերջերս Հոգովայ Ս. Պապը պատիւ ունի ծանօթացնել հասարակութեանը, որ երկու տարուայ միջոցում աւարտել են 21 աշակերտ, որոնցից միայն 5 զեւ որոշ պարագանք ու պայտօն չ'ունեն. ուստի այն անձիքը, որոնք կը կամենան իրենց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ ունենալ, թող բարեհաճեն դիմել վերոյիշեալ հասցէով: